ռուներ ևս հանուած են. որոց միջոցը կարճ է և ջրաղացքներ դարձնելու կը գործածուի միայն։

Բասկևիչի միջոցին Ռուսական հողը գաղթող ծերունիք կը պատմեն թէ. «Խաստուրցիք ամեն տարի երբ ջրուղին մաքրելու համար Շեռեանայ գլուխ կը հաւաքուէին, հազար երիտասարդ պիտի լինէին, եօթ ձեռք նաղարայ պիտի ածէին, պարէին. մի օր ևս Խաստուրայ գիւղապետի առաջնորդութեամբ Ռամկան գիւղի հացատէր Մելոյի տունը պիտի ճաշէին[1]»։

Ըստ աւանդութեան գիւղս ի հնումն քաղաքի մի տարածութիւն ունէր, որպէս տեղ տեղ նշաններ կերևին։ Ըստ ոմանց՝ (Ուչքիլիսէի վանքի միաբաններու ասութեան) Ս. Վարդան Մամիկոնեան Յունաց մասն անցնելու համար այս տեղ եկած է, յետոյ նախարարք խնդրանօք յետ դարձուցած են։

Այս աւանդութեան սակաւ իմն յարմար կգայ Զամչեանի գրածն. «Եւ հասեալ (Վարդանայ) ի գիւղ մի Արամանեայ կոչեցեալ ի գաւառին Բագրևանդայ, մօտ ի սահմանս Բասենոյ և Տուարածատափայ՝ կային անդ զաւուրս ինչ»։

«Հասեալ սոցա (իշխանաց) ի նախասացեալ գիւղն Արամանեայ՝ գտին անդ զՎարդան և զեղբարս նորա . . . յորդորէին զնա . . . դառնալ յետս»։ Այս գիւղը Անդափի սահմանից 2 ½ ժամ ի հիւսիս, իսկ Բասենից 5 ժամ յարևելս է։ Եթէ չէ այս Արամանեակն՝ աւելի յարմար կգայ Աբուզէթ գիւղն, որ Խալեազի բարձրութեան վերայ և մերձ Բասեանի ապահով վայր մի է։

---

1. Մելոյի տան հնաւանդ սովորութիւն էր ամեն տարի հաց տալ. Խաստուր գիւղի իշխաններն մի օր առաջ լուր կտային՝ որ հազար հոգու հացի պատրաստութիւն տեսնայ։ Այժմ Ռամիկան ոչ հայ կայ եւ ոչ Մելոյի տուն։